Հարցուպատասխան
Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի վերաբերյալ

Երևան, 2023

Այս հարցուպատասխանը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան, և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ծրագիրն իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ ի դեմս Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Coalition for Inclusive Legal Reforms

"AGATE"
RIGHTS DEFENSE CENTER FOR WOMEN WITH DISABILITIES

ԴԵՊԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
TOWARDS INCLUSIVE ARMENIA

Որո՞նք են հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքները:

Հասարակության բոլոր անդամներն ունեն մարդու նույն իրավունքները: Դրանք ներառում են քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքները: Այս իրավունքների օրինակներն են՝

- օրենքի առաջ հավասարություն առանց խտրականության
- կյանքի, ազատության և անվտանգության իրավունք
- օրենքի առջև հավասար ճանաչում և գործունակություն
- ազատություն խոշտանգումներից
- ազատություն շահագործումից, բռնությունից և չարաշահումից
- ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության նկատմամբ հարգանքի իրավունք
- տեղաշարժի ազատություն և քաղաքացիություն
- համայնքում ապրելու իրավունք
- արտահայտվելու և կարծիքի ազատություն
- հարգանք գաղտնիության նկատմամբ
- հարգանք տան և ընտանիքի նկատմամբ
- կրթության իրավունք
- առողջության իրավունք

- աշխատելու իրավունք
- բավարար կենսամակարդակի իրավունք
- քաղաքական և հասարակական կյանքին մասնակցելու իրավունք
- մշակութային կյանքին մասնակցելու իրավունք

Հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք իրենց իրավունքներն իրացնելիս չպետք է ենթարկվեն խտրականության: Սա նշանակում է, որ ոչ ոք իր փաստացի կամ ենթադրյալ հաշմանդամության հիման վրա չպետք է խտրականության ենթարկվի: Բացի այդ, հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է ենթարկվեն խտրակության նաև ցանկացած այլ հիմքով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, սեփականությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

Ի՞նչ է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան միջազգային պայմանագիր է, որը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները, ինչպես նաև Կոնվենցիայի մասնակից պետությունների պարտավորությունները՝ խթանելու, պաշտպանելու և ապահովելու այդ իրավունքները: Կոնվենցիան սահմանում է նաև իրականացման երկու մեխանիզմ՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, որը ստեղծվել է իրականացման մոնիտորինգի համար, և
2. Մասնակից պետությունների համաժողով, որը ստեղծվել է իրականացման հետ կապված հարցերը քննարկելու համար:

Պետությունները Կոնվենցիայի շուրջ բանակցություններ են վարել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, մարդու իրավունքների ազգային ինստիտուտների և միջկառավարական կազմակերպությունների մասնակցությամբ: Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան ընդունել է Կոնվենցիան 2006 թվականի դեկտեմբերի 13-ին և այն բացվել է ստորագրման համար 2007 թվականի մարտի 30-ին: Կոնվենցիան վավերացնող պետությունները իրավաբանորեն պարտավոր են հարգել Կոնվենցիայի չափանիշները: Այլ պետությունների համար Կոնվենցիան ներկայացնում է միջազգային չափանիշ, որին նրանք պետք է ձգտեն հարգել:

Ի՞նչ է Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը:

Կամընտիր արձանագրությունը ևս միջազգային պայմանագիր է: Կամընտիր արձանագրությունը սահմանում է երկու ընթացակարգ՝ ուղղված Կոնվենցիայի իրականացմանը և մշտադիտարկման ուժեղացմանը: Առաջինը բողոքների անհատական հաղորդման ընթացակարգն է, որը թույլ է տալիս անհատներին բողոքներ ներկայացնել Կոմիտե՝ իրենց իրավունքների խախտման վերաբերյալ պահանջներով: Երկրորդը հետաքննության ընթացակարգ է, որը Կոմիտեին տալիս է Կոնվենցիայի կոպիտ կամ համակարգված խախտումների վերաբերյալ հետաքննություն իրականացնելու իրավասություն:

Ի՞նչ այլ միջազգային փաստաթղթեր են ճանաչում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

Վերջին տասնամյակների ընթացքում պետությունները հատուկ գործիքներ են ընդունել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները պաշտպանելու և խթանելու համար: Այդ փաստաթղթերից են՝

- Հաշմանդամ անձանց իրավունքների մասին հռչակագիրը (1995 թ.).
- Հաշմանդամ անձանց վերաբերյալ գործողությունների համաշխարհային ծրագիր (1981 թ.).
- Հոգեկան հիվանդությամբ անձանց պաշտպանության և հոգեկան առողջության խնամքի բարելավման սկզբունքները (1991 թ.).
- Հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների հավասարեցման ստանդարտ կանոններ (1993 թ.):

Թեև ուղեցույցները, հռչակագրերը, սկզբունքները, բանաձևերը և այլ փաստաթղթեր իրավաբանորեն պարտադիր չեն, դրանք արտահայտում են պետությունների բարոյական և քաղաքական պարտավորությունը և կարող են օգտագործվել որպես օրենսդրություն ընդունելու կամ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ քաղաքականություն մշակելու ուղեցույց: Կարևոր է նշել, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց պաշտպանության և հոգեկան առողջության խնամքի բարելավման սկզբունքների որոշ դրույթներ քննադատության են ենթարկվել: Այժմ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան ավելի բարձր չափանիշներ է սահմանել նաև այդ հարցում:

Բացի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայից, մարդու իրավունքներին ո՞ր կոնվենցիաներն են առնչվում:

Մարդու իրավունքների բոլոր կոնվենցիաները վերաբերում են բոլորին, ներառյալ հաշմանդամություն ունեցող անձանց: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը պաշտպանում են ցանկացած հիմքով խտրականությունից: Կան նաև մարդու իրավունքների կոնվենցիաներ, որոնք վերաբերում են խտրականությանը: Օրինակ՝ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան: Կան նաև կոնվենցիաներ հատուկ խնդիրների կամ մարդկանց խմբերի իրավունքների մասին, ինչպիսիք են երեխաները կամ աշխատանքային միգրանտները:

Մարդու իրավունքների հիմնական պայմանագրերը հետևյալն են.

- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը
- Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան
- Խոշտանգումների դեմ կոնվենցիա
- Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան
- Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիա
- Բռնությամբ անհետացած բոլոր անձանց պաշտպանության մասին միջազգային կոնվենցիա
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան:

Մարդու իրավունքների բոլոր կոնվենցիաները ներառում են խտրականությունից պաշտպանող դրույթ: Այնուամենայնիվ, այս կոնվենցիաներից միայն մեկը՝ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան է հատուկ ճանաչում հաշմանդամության հիմքով խտրականությունից պաշտպանվելու անհրաժեշտությունը:

Այնուամենայնիվ, բոլոր Կոնվենցիաները հաշմանդամությունն անուղղակիորեն համարում են որպես խտրականությունից պաշտպանության հիմք: Սա պարզ է դարձնում, որ հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է խտրականության ենթարկվեն այս կոնվենցիաների կիրառման ժամանակ: Այսպիսով, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, օրինակ, վերաբերում է բոլոր կանանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց:

Ինչո՞ւ է անհրաժեշտ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա ունենալ:

Կոնվենցիան անհրաժեշտ է հստակ վերահաստատելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները մարդու իրավունքներ են և ամրապնդելու այդ իրավունքների նկատմամբ հարգանքը: Թեև գործող մարդու իրավունքների կոնվենցիաները զգալի ներուժ ունեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները խթանելու և պաշտպանելու համար, բայց պարզ դարձավ, որ այդ ներուժը չի օգտագործվում: Գործնականում հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում էին զրկվել իրենց մարդու իրավունքներից և մնում էին հասարակության լուսանցքում աշխարհի բոլոր մասերում: Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ այս շարունակական խտրականությունն ընդգծեց իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթ ընդունելու անհրաժեշտությունը, որը սահմանում է պետությունների իրավական պարտավորությունները՝ խթանելու և պաշտպանելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:



Ինչո՞ւ է Կոնվենցիան եզակի:

Կոնվենցիան 21-րդ դարի մարդու իրավունքների առաջին կոնվենցիան է և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների համապարփակ պաշտպանությամբ առաջին իրավաբանորեն պարտադիր փաստաթուղթը: Թեև Կոնվենցիան չի սահմանում մարդու նոր իրավունքներ, այն շատ ավելի հստակորեն սահմանում է պետությունների պարտավորությունները՝ խթանելու, պաշտպանելու և ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

Այսպիսով, Կոնվենցիան ոչ միայն հստակեցնում է, որ պետությունները չպետք է խտրականություն գործեն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ, այլև սահմանում է բազմաթիվ քայլեր, որոնք պետությունները պետք է ձեռնարկեն բարենպաստ միջավայր ստեղծելու համար, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք կարողանան իրական հավասարություն վայելել հասարակության մեջ: Օրինակ՝ Կոնվենցիան պետություններից պահանջում է միջոցներ ձեռնարկել ֆիզիկական միջավայրի և տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների մատչելիությունն ապահովելու համար: Նմանապես, պետությունները պարտավորություններ ունեն իրազեկության բարձրացման, արդարադատության մատչելիության խթանման, անհատական շարժունակության ապահովման և Կոնվենցիային առնչվող առանձին տվյալների հավաքագրման հետ կապված: Այսպիսով՝ Կոնվենցիան շատ ավելի խորն է անցնում, քան մարդու իրավունքների այլ պայմանագրերը՝ սահմանելով այն քայլերը, որոնք պետությունները պետք է ձեռնարկեն խտրականությունն արգելելու և բոլորի համար հավասարություն ձեռք բերելու համար:

Կոնվենցիան ընդունում է միջազգային համագործակցության կարևորությունը և դրա խթանումը՝ աջակցելու ազգային իրականացման ջանքերին: Այս առումով նորամուծությունը վերաբերում է հատուկ հղումների այն գործողություններին, որոնք միջազգային հանրությունը կարող է ձեռնարկել միջազգային համագործակցությունը խթանելու համար, ինչպիսիք են՝

- ապահովել, որ միջազգային զարգացման ծրագրերը ներառեն և մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար.
- նպաստել և աջակցել կարողությունների զարգացմանը.
- համագործակցել հետազոտությունների ոլորտում և գիտական և տեխնիկական գիտելիքների հասանելիության հարցերում.
- անհրաժեշտության դեպքում տեխնիկական և տնտեսական աջակցության տրամադրել միմյանց:

Ի՞նչ բովանդակություն ունի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան:

Կոնվենցիան սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքները և պետությունների պարտավորությունները՝ խթանելու, պաշտպանելու և ապահովելու այդ իրավունքները, ինչպես նաև իրականացմանն ու մշտադիտարկմանն աջակցելու մեխանիզմները: Բովանդակությունը կարելի է բաժանել հետևյալ կերպ.

- Նախաբան – Տալիս է Կոնվենցիայի ընդհանուր ենթատեքստը և բացահայտում կարևոր հիմնախնդիրները.
- Նպատակը – Սահմանում է Կոնվենցիայի նպատակը, որն է՝ նպաստել, պաշտպանել և ապահովել հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մարդու բոլոր իրավունքների և հիմնական ազատությունների լիարժեք և հավասար իրացումը և նպաստել նրանց բնածին արժանապատվության հարգմանը.
- Սահմանումներ – Ներկայացնում է Կոնվենցիայում օգտագործվող հիմնական տերմինները, այն է՝ հաղորդակցություն, լեզու, հաշմանդամության հիմքով խտրականություն, խելամիտ հարմարեցում և համընդհանուր ձևավորում.
- Ընդհանուր սկզբունքներ - Սահմանում է այն չափանիշները կամ հրամայականները, որոնք կիրառվում են Կոնվենցիայի բոլոր իրավունքներից օգտվելու համար, ինչպիսիք են խտրականության բացառման և հավասարության սկզբունքը.
- Պարտավորություններ – Պարզաբանում է այն քայլերը, որոնք պետությունները պետք է ձեռնարկեն՝ նպաստելու, պաշտպանելու և ապահովելու Կոնվենցիայի իրավունքները.
- Հատուկ իրավունքներ – Նկարագրում է առկա քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական մարդու իրավունքները՝ հաստատելով, որ հաշմանդամություն ունեցող անձինք նույնպես ունեն այդ իրավունքները.
- Խթանող միջոցառումներ – Սահմանում է կոնկրետ քայլեր, որոնք պետությունները պետք է ձեռնարկեն՝ ապահովելու համար բարենպաստ միջավայր մարդու իրավունքներից օգտվելու համար, մասնավորապես՝ իրազեկության բարձրացում, մատչելիության ապահովում, պաշտպանություն և անվտանգություն ռիսկային և հումանիտար արտակարգ իրավիճակներում, արդարադատության մատչելիության խթանում, անհատական շարժունակության ապահովում, վերականգնման հնարավորություն, վիճակագրության և տվյալների հավաքում.

- Միջազգային համագործակցություն – Նշում է միջազգային հանրության համատեղ աշխատանքի կարևորությունը՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիարժեք իրացումը.
- Իրականացում և մշտադիտարկում – Պահանջում է պետություններից ստեղծել ազգային մեխանիզմներ Կոնվենցիայի մշտադիտարկման և իրականացման համար և ստեղծում է Մասնակից պետությունների համաժողով, որը քննարկում է Կոնվենցիայի կատարման հետ կապված ցանկացած հարց, և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե՝ Կոնվենցիայի մշտադիտարկման համար.
- Եզրափակիչ դրույթներ – Սահմանում են ստորագրման, վավերացման, ուժի մեջ մտնելու ընթացակարգերը և Կոնվենցիային առնչվող այլ ընթացակարգային պահանջներ.

Որո՞նք են Կոնվենցիայի սկզբունքները:

Հոդված 3-ը սահմանում է ընդհանուր սկզբունքները, որոնք վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացմանը: Դրանք են՝

- հարգանք արժանապատվության, անհատի ինքնավարության, սեփական ընտրությունը կատարելու ազատության և անձի անկախության իրավունքի նկատմամբ.
- խտրականության բացառում.
- հանրային կյանքում լիակատար և արդյունավետ մասնակցություն և ներառում.
- հարգանք տարբերության նկատմամբ և հաշմանդամություն ունեցող անձանց որպես մարդկային բազմազանության և մարդկության մաս ընդունելը,
- հնարավորությունների հավասարություն.
- մատչելիություն.
- հավասարություն տղամարդկանց և կանանց միջև.
- հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող կարողությունների նկատմամբ և հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների՝ իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ:

Արդյոք «հաշմանդամություն» և «հաշմանդամություն ունեցող անձինք» հասկացությունները սահմանված են Կոնվենցիայում:

Կոնվենցիան չի սահմանում «հաշմանդամություն» կամ «հաշմանդամություն ունեցող անձանց» հասկացությունները: Այնուամենայնիվ, նախաբանի և 1-ին հոդվածի տարրերը ուղենիշ են հանդիսանում Կոնվենցիայի կիրառումը պարզաբանելու համար:

«Հաշմանդամություն» – Նախաբանն ընդունում է, որ «հաշմանդամությունը զարգացող հասկացություն է, և որ այն արդյունք է այնպիսի փոխազդեցության, որը տեղի է ունենում առողջական խնդիրներ ունեցող մարդկանց և վերաբերմունքի ու շրջապատի սահմանափակումների միջև, որոնք խոչընդոտում են նրանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով լիարժեք ու արդյունավետ մասնակցությանը հասարակական կյանքում»:

«Հաշմանդամություն ունեցող անձինք» – 1-ին հոդվածում ասվում է, որ «հաշմանդամություն ունեցող անձինք ներառում են նրանց, որոնք ունեն երկարատև ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական խանգարումներ, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով»:

Այս դրույթների մի քանի տարրեր կարևոր են ընդգծելու համար: Նախ, կա գիտակցում, որ «հաշմանդամությունը» զարգացող հասկացություն է, որն առաջանում է վերաբերմունքի և միջավայրի խոչընդոտներից, որոնք խոչընդոտում

են հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակությանը: Հետևաբար, «հաշմանդամություն» հասկացությունը հաստատուն չէ և կարող է փոփոխվել՝ կախված հասարակությունից հասարակությունում տիրող միջավայրից:

Երկրորդ, հաշմանդամությունը համարվում է ոչ թե որպես բժշկական վիճակ, այլ ավելի շուտ բացասական վերաբերմունքի կամ ոչ բարենպաստ միջավայրի փոխազդեցության արդյունք որոշակի անձանց վիճակի հետ: Ի տարբերություն հաշմանդամություն ունեցող անձանց «ուղղելու» ջանքերին՝ վերացնելով վերաբերմունքային և միջավայրային խոչընդոտներն անձինք կարող են մասնակցել որպես հասարակության ակտիվ անդամներ և օգտվել իրենց իրավունքների ամբողջ շրջանակից:

Երրորդ, Կոնվենցիան չի սահմանափակում կոնկրետ անձանց շրջանակ: Ավելի շուտ, Կոնվենցիան սահմանում է, որ կոնվենցիայի առաջնային թիրախը երկարաժամկետ ֆիզիկական, հոգեկան, մտավոր և զգայական հաշմանդամություն ունեցող անձինք են: Սակայն «ներառում է» ձևակերպումը նշանակում է, որ դա սպառիչ ցանկ չէ և մասնակից պետությունները կարող են նաև պաշտպանություն ապահովել այլոց համար, օրինակ՝ կարճաժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց կամ ովքեր թեև չունեն հաշմանդամություն, բայց ընկալվում են այդպիսին:

Որո՞նք են Կոնվենցիայում սահմանված հատուկ իրավունքները:

Կոնվենցիան վերահաստատում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք օգտվում են նույն մարդու իրավունքներից, ինչ բոլորը: Կոնվենցիայով ճանաչված հատուկ իրավունքներն են.

- օրենքի առաջ հավասարություն առանց խտրականության
- անձի կյանքի, ազատության և անվտանգության իրավունք
- օրենքի առաջ հավասար ճանաչում և գործունակություն
- ազատություն խոշտանգումներից
- ազատություն շահագործումից, բռնությունից և չարաշահումից
- ֆիզիկական և մտավոր անձեռնմխելիության նկատմամբ հարգանքի իրավունք
- տեղաշարժի ազատություն և քաղաքացիություն
- համայնքում ապրելու իրավունք
- արտահայտվելու և կարծիքի ազատություն
- հարգանք գաղտնիության նկատմամբ
- հարգանք տան և ընտանիքի նկատմամբ
- կրթության իրավունք
- առողջության իրավունք
- աշխատելու իրավունք
- համապատասխան կենսամակարդակի իրավունք
- քաղաքական և հասարակական կյանքին մասնակցելու իրավունք
- մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:

Ի՞նչ պարտավորություններ ունեն Կոնվենցիայի մասնակից պետությունները:

Կոնվենցիան սահմանում է ընդհանուր և հատուկ պարտավորություններ մասնակից պետությունների համար՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հետ: Ընդհանուր պարտավորությունների առումով պետությունները պետք է.

- ընդունեն հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական և վարչական միջոցներ.
- ընդունեն օրենսդրական և այլ միջոցներ խտրականությունը վերացնելու համար.
- պաշտպանեն և խթանեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները բոլոր քաղաքականություններում և ծրագրերում.
- դադարեցնեն ցանկացած պրակտիկա, որը խախտում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները.
- ապահովեն, որ պետական հատվածը հարգի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները.
- ապահովեն, որ մասնավոր հատվածը և անհատները հարգեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները.
- ձեռնարկեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ապրանքների, ծառայությունների և տեխնոլոգիաների հետազոտություն և զարգացում և խրախուսեն մյուսներին նման հետազոտություններ իրականացնել.
- տրամադրեն մատչելի տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող տեխնոլոգիաների մասին.
- նպաստեն հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մասնագետների և անձնակազմի համար Կոնվենցիայի իրավունքների վերաբերյալ ուսուցմանը.
- խորհրդակցեն և ներգրավեն հաշմանդամություն ունեցող անձանց օրենսդրության և քաղաքականության մշակման և իրականացման և նրանց վերաբերող որոշումների կայացման գործընթացներում:

Ինչպե՞ս է մշտադիտարկում Կոնվենցիան։

Կոնվենցիան պահանջում է մշտադիտարկել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: Ազգային մակարդակով Կոնվենցիան պետություններից պահանջում է, իրենց իրավական և վարչական համակարգերին համապատասխան պահպանել, ամրապնդել, նշանակել կամ ստեղծել Կոնվենցիայի կիրարկումը խթանելու, պաշտպանելու և մշտադիտարկելու համար շրջանակ:

Միջազգային մակարդակով Կոնվենցիան ստեղծել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե, որը վերանայում է պետությունների կողմից ներկայացված պարբերական զեկույցները Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ իրենց ձեռնարկած քայլերի վերաբերյալ: Կոմիտեն նաև իրավասու է ուսումնասիրելու առանձին հաղորդումներ և անցկացնելու հետաքննություններ այն պետություններում, որոնք ճանաչել են Կոմիտեի լիազորությունը՝ վավերացնելով կամընտիր արձանագրությունը:

Ինչպե՞ս է ազգային մակարդակում իրականացվում Կոնվենցիան:

Կոնվենցիան խթանելու, պաշտպանելու և մշտադիտարկելու համար «ազգային շրջանակ» հասկացությունը համեմատաբար ընդհանրական է: Կոնվենցիան ընդունում է, որ նման շրջանակները կարող են տարբերվել երկրից երկիր՝ թույլ տալով ճկունություն յուրաքանչյուր պետության իրավական և վարչական համակարգին համապատասխան: Այնուամենայնիվ, Կոնվենցիան նաև պահանջում է, որ ցանկացած մարմին, որը ստեղծվի, պետք է անկախ լինի: Սովորաբար, ազգային շրջանակները ենթադրում են առնվազն մարդու իրավունքների ազգային անկախ ինստիտուտի ստեղծում, ինչպիսին է Մարդու իրավունքների հանձնաժողովը կամ օմբուդսմենի գրասենյակը: Այնուամենայնիվ, շրջանակը կարող է պարունակել այլ տարրեր, ինչպիսիք են դատարանները:

Ի՞նչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն անկախ փորձագետների մարմին է, որը մշտադիտարկում է պետությունների կողմից Կոնվենցիայի կատարումը: Կոմիտեն բաղկացած է 18 փորձագետներից: Մասնակից պետությունները փորձագետներին ընտրում են՝ ելնելով մարդու իրավունքների և հաշմանդամության ոլորտում նրանց փորձից, ինչպես նաև՝ հաշվի առնելով արդար աշխարհագրական ներկայացվածությունը, քաղաքակրթության և իրավական համակարգերի տարբեր ձևերի ներկայացվածությունը, գենդերային հավասարակշռությունը և հաշմանդամություն ունեցող փորձագետների մասնակցությունը:

Կոմիտեն պարբերաբար ուսումնասիրում է պետությունների կողմից պատրաստված զեկույցները Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ նրանց կողմից ձեռնարկված քայլերի վերաբերյալ: Այն պետությունների համար, որոնք կամընտիր արձանագրության կողմ են, Կոմիտեն նաև իրավասու է բողոքներ ստանալ անհատներից իրենց իրավունքների ենթադրյալ խախտման վերաբերյալ և հետաքննություններ նախաձեռնել Կոնվենցիայի կոպիտ կամ համակարգված խախտումների դեպքում:

Ի՞նչ է Մասնակից պետությունների համաժողովը:

Կոնվենցիան նաև հիմնում է Մասնակից պետությունների համաժողով, որը պարբերաբար հանդիպում է Կոնվենցիայի իրականացման հետ կապված ցանկացած հարց քննարկելու նպատակով: Կոնվենցիան բաց է թողնում Մասնակից պետությունների կոնֆերանսի դերի ճշգրիտ բնույթը, թեև պարտականությունները ներառում են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտեի անդամների ընտրությունը և Կոնվենցիայի առաջարկվող փոփոխությունների քննարկումն ու ընդունումը:

Ի՞նչ է պարբերական հաշվետվությունը:

Կոնվենցիայի մասնակից յուրաքանչյուր պետություն պետք է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացնի նախնական համապարփակ զեկույց Կոնվենցիայի իրականացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ: Յուրաքանչյուր պետություն պետք է իր նախնական զեկույցը ներկայացնի այդ պետության համար Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Նախնական հաշվետվությունը պետք է ներկայացնի.

- կոնվենցիայի իրականացման սահմանադրական, իրավական և վարչական դաշտի ստեղծումը.
- Կոնվենցիայի յուրաքանչյուր դրույթի իրականացման համար ընդունված քաղաքականություններն ու ծրագրերը.
- ներկայացնի ցանկացած առաջընթաց, որը ձեռք է բերվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման գործում՝ Կոնվենցիայի վավերացման և իրականացման արդյունքում:

Յուրաքանչյուր պետություն պետք է ներկայացնի հետագա հաշվետվություններ առնվազն չորս տարին մեկ անգամ կամ երբ Կոմիտեն պահանջի: Հետագա հաշվետվությունները պետք է.

- արձագանքի մտահոգություններին և այլ հարցերի, որոնք ընդգծվել են Կոմիտեի կողմից նախորդ զեկույցների վերաբերյալ իր ամփոփիչ դիտարկումներում.
- ցույց տան հաշվետու ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման առաջընթացը.
- ընդգծեն ցանկացած խոչընդոտ, որին բախվել են Կառավարությունը և մյուս դերակատարները Կոնվենցիայի իրականացման ընթացքում հաշվետու ժամանակահատվածում:

Հնարավո՞ր է բողոքել Կոմիտեին, եթե իրավունքները խախտվել են:

Այո՛: Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը սահմանում է հաղորդման անհատական ընթացակարգ, որը թույլ է տալիս արձանագրության մասնակից պետության անհատներին և խմբերին բողոքել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին, որ պետությունը խախտել է Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորություններից մեկը: Բողոքը հաճախ ասում են «հաղորդում»: Կոմիտեն ուսումնասիրում է բողոքն ու պետության դիտարկումները և դրա հիման վրա ձևակերպում է իր տեսակետներն ու առաջարկությունները, դրանք ուղարկում է պետությանը և հրապարակում:

Կարո՞ղ է Կոմիտեն հետաքննություններ ձեռնարկել:

Այո՛: Կամընտիր արձանագրությունը սահմանում է հետաքննության ընթացակարգ: Եթե Կոմիտեն ստանա հավաստի տեղեկություն, որը վկայում է Կոնվենցիայի որևէ դրույթի՝ կամընտիր արձանագրության մասնակից պետության կողմից լուրջ կամ համակարգված խախտումների մասին, Կոմիտեն կարող է հրավիրել տվյալ պետությանն արձագանքելու այդ տեղեկությանը: Մասնակից պետության դիտարկումները և ցանկացած այլ հավաստի տեղեկություն դիտարկելուց հետո Կոմիտեն կարող է նշանակել իր անդամներից մեկին կամ մի քանիսին հետաքննություն անցկացնելու և հրատապ զեկույց հրապարակելու համար: Եթե պետությունը համաձայնի, Կոմիտեն կարող է այցելել տվյալ երկիր: Հետաքննությունն իրականացնելուց հետո Կոմիտեն իր եզրակացությունները փոխանցում է պետությանը, որը վեց ամիս ժամանակ ունի հետագա դիտարկումներ ներկայացնելու համար: Կոմիտեն ի վերջո ամփոփում է իր բացահայտումները, որոնք հրապարակում է: Կամընտիր արձանագրությունը վավերացնող պետությունը կարող է «հրաժարվել» հետաքննության ընթացակարգից:

Ո՞ՐՆ Է ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ:

Քաղաքացիական հասարակությունը կարևոր դեր ունի մշտադիտարկման գործընթացում, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով: Ինչ վերաբերում է ազգային մակարդակին, Կոնվենցիան հստակորեն սահմանում է, որ քաղաքացիական հասարակությունը, մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ներկայացնող կազմակերպությունները, պետք է ներգրավվեն և լիարժեք մասնակցեն մշտադիտարկման գործընթացին (տես Կոնվենցիայի հոդված 33.3): Միջազգային մշտադիտարկման հետ կապված՝ մասնակից պետություններին հրավիրվում է պատշաճ ուշադրություն դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացուցնող կազմակերպությունների հետ խորհրդակցություններին և ակտիվորեն ներգրավելուն՝ պայմանագրային մարմնի համար փորձագետներ նշանակելիս (տես Կոնվենցիայի հոդված 34.3): Ավելին, մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի՝ մշտադիտարկում իրականացնող այլ մարմինների փորձը ընդգծում է այն կարևոր դերը, որը կարող է ունենալ քաղաքացիական հասարակությունը պարբերական հաշվետվությունների գործընթացում՝ աջակցելու անհատներին անհատական հաղորդումներ ներկայացնելու և Կոմիտեին մարդու իրավունքների լուրջ կամ համակարգված խախտումների վերաբերյալ հավաստի տեղեկություն տրամադրելու հարցում:

Ի՞նչ է Կոնվենցիայի ստորագրությունը:

Կոնվենցիայի մասնակից դառնալու առաջին քայլը պայմանագրի ստորագրումն է: Պետությունները և տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները կարող են ստորագրել կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը: Պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները կարող են ցանկացած ժամանակ ստորագրել Կոնվենցիան: Կոնվենցիան կամ կամընտիր արձանագրությունը ստորագրելով՝ պետությունները կամ տարածաշրջանային ինտեգրման կազմակերպությունները նշում են իրենց մտադրությունը՝ ավելի ուշ պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ: Ստորագրումը նաև պարտավորություն է ստեղծում ստորագրման և վավերացման միջև ընկած ժամանակահատվածում ձեռնպահ մնալ այն գործողություններից, որոնք կխախտեն պայմանագրի առարկան ու նպատակը:



Ի՞նչ է վավերացումը:

Կոնվենցիայի կամ կամընտիր արձանագրության կողմ դառնալու հաջորդ քայլը վավերացումն է: Վավերացումը պետությունների կողմից ձեռնարկվող կոնկրետ գործողություն է, որն ազդարարում է կոնվենցիայում կամ կամընտիր արձանագրությունում առկա իրավունքներն ու պարտականությունները ստանձնելու մտադրությունը: Տարածաշրջանային ինտեգրման կազմակերպություններն իրենց համաձայնությունն են հայտնում կոնվենցիայով կամ կամընտիր արձանագրությամբ կապված լինելու «պաշտոնական հաստատման» միջոցով՝ մի ակտ, որն ունի նույն ազդեցությունը, ինչ վավերացումը:

Ի՞նչ է միացումը:

Պետությունը կամ տարածաշրջանային ինտեգրացիոն կազմակերպությունը կարող է նաև իր համաձայնությունը հայտնել միանալու ակտով կոնվենցիայով կամ կամընտիր արձանագրությամբ պարտավորված լինելու վերաբերյալ: Միանալն ունի նույն իրավական ուժը, ինչ վավերացումը: Սակայն, ի տարբերություն վավերացման, որին պետք է նախորդի ստորագրումը, միանալը պահանջում է միայն մեկ քայլ՝ միանալու փաստաթուղթը ի պահ հանձնել:

Ո՞րն է ՄԱԿ-ի քարտուղարության դերը Կոնվենցիայի առնչությամբ:

Միավորված ազգերի կազմակերպությունը ստեղծել է Կոնվենցիայի միասնական քարտուղարություն, որը բաղկացած է ինչպես ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի դեպարտամենտի (DESA) աշխատակազմից, որը գտնվում է Նյու Յորքում, այնպես էլ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակից՝ (OHCHR) Ժնևում: Տնտեսական և սոցիալական հարցերի վարչությունն աջակցում է Մասնակից պետությունների համաժողովին, իսկ Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակն աջակցում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին: Նրանք համագործակցաբար աջակցում են պետություններին, քաղաքացիական հասարակությանը և մարդու իրավունքների ազգային հաստատություններին Կոնվենցիայի իրականացման և մոնիտորինգի համար:

Ո՞րն է հաշմանդամության հարցերով հատուկ զեկուցողի դերը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի մանդատը ստեղծվել է 2014 թվականին Մարդու իրավունքների խորհրդի կողմից՝ միջազգային հանրությանը տեղեկացնելու հրատապ խնդիրների մասին, որոնց բախվում են հաշմանդամություն ունեցող անձինք աշխարհի տարբեր մասերում, ինչպես նաև օգնել երկրներին լուծումների առաջարկներով:

Ինչպե՞ս է ընթացել կոնվենցիայի բանակցությունը:

Կոնվենցիան մշակվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության և խրախուսման համապարփակ և ամբողջական միջազգային կոնվենցիայի հանձնաժողովի կողմից (Ad Hoc կոմիտե), որը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կոմիտե էր: Նրա անդամակցությունը բաց էր Միավորված ազգերի կազմակերպության բոլոր անդամ պետությունների և դիտորդների համար: Իր առաջին նիստի ժամանակ հանձնաժողովը որոշեց, որ հանձնաժողովում հավատարմագրված ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները նույնպես կարող են մասնակցել հանդիպումներին և հայտարարություններ անել ՄԱԿ-ի պրակտիկայի համաձայն:

Հանձնաժողովն անցկացրել է ութ նիստ: Իր առաջին երկու նստաշրջաններում 2002 և 2003 թվականներին, Կոմիտեն քննարկեց հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթուղթ մշակելու հնարավորությունը և քննարկեց փաստաթղթի տեսակը և հնարավոր տարրերը, որոնք պետք է ներառվեն: Իր երկրորդ նիստում հանձնաժողովը ստեղծեց աշխատանքային խումբ՝ կոնվենցիայի տեքստի նախագիծ պատրաստելու համար: Կառավարության և ՀԿ-ների ներկայացուցիչներից կազմված աշխատանքային խումբը հանդիպել է 2004 թ. հունվարին և մշակել տեքստ՝ բանակցելու համար: Հանձնաժողովն իր երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ և ութերորդ նիստերում շարունակեց իր բանակցությունները: Կոնվենցիայի տեքստը վերջնական տեսքի է բերվել հանձնաժողովի կողմից 2006 թվականի օգոստոսի 26-ին:

Նախագիծը մշակող խումբը, որին հանձնարարված էր ապահովել տերմինաբանության միատեսակությունը Կոնվենցիայի նախագծի տեքստում և ներդաշնակեցնել տարբերակները Միավորված ազգերի կազմակերպության պաշտոնական լեզուներով, վերանայել է տեքստը 2006 թվականի սեպտեմբերից մինչև նոյեմբեր:

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիայի և դրա կամընտիր արձանագրության տեքստը:

Կոնվենցիայի բանակցությունների ընթացքում խորհրդակցություններ անցկացվե՞լ են տարածաշրջանային մակարդակով:

Տարածաշրջանային խորհրդատվական հանդիպումներ են անցկացվել բազմաթիվ տարածաշրջաններում և որոշ ենթատարածաշրջաններում 2003-2006 թվականներին: Խորհրդակցական հանդիպումները ներառում էին ինչպես Կոնվենցիայի գործընթացի և բովանդակության վերաբերյալ քննարկում, այնպես էլ տարածաշրջանային առաջնահերթությունների և հետևանքների վերաբերյալ երկխոսություն: Հանդիպումների արդյունքում ստեղծվել են առաջարկություններ, որոնք արտացոլում են ազգային, ենթատարածաշրջանային և տարածաշրջանային առաջնահերթությունները, որոնք նպաստել են հանձնաժողովի աշխատանքին:

Ո՞րն էր ՄԱԿ-ի հաշմանդամության կամավոր հիմնադրամի դերը Կոնվենցիայի բանակցություններում:

Բանակցային գործընթացի ընթացքում ՄԱԿ-ի Հաշմանդամության կամավոր հիմնադրամն աջակցել է զարգացող երկրների հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությանը և, մասնավորապես, ամենաքիչ զարգացած երկրների, հանձնաժողովի նիստերին:

Կամավոր հիմնադրամի դրամաշնորհները նպատակաուղղված էին Կոնվենցիայի խթանման և իրականացման շուրջ պիլոտային և նորարարական գործողություններին աջակցելու համար:

Ինչպե՞ս է ապահովվել բանակցային փաստաթղթերի մատչելիությունը:

Բանակցային գործընթացի ընթացքում մատչելիության ապահովման մեթոդները ժամանակի ընթացքում ավելի կատարելագործվեցին: Մեթոդները փոխվել են ընթացքում՝ սկավառակներից և բրայլյան թղթերից մինչև համացանցային կայք: Կայքը համապատասխանում էր Վեբ բովանդակության մատչելիության ուղեցույցի (WCAG 1.0) A մակարդակի ստանդարտներին: Ի թիվս այլ առանձնահատկությունների, մատչելիության այս մակարդակը թույլ է տվել աջակցող տեխնոլոգիաներ օգտագործողներին արդյունավետ օգտվել կայքից: Կոնվենցիայի տեքստի բանակցային աշխատանքային փաստաթղթերը տեղադրվեցին կայքում հենց որ դրանք քննարկվեցին հանձնաժողովի նիստի ժամանակ, ինչը նորարարական պրակտիկա էր ՄԱԿ-ի կոնվենցիայի բանակցությունների համար: Այդպիսով, վեբկայքն ակնթարթորեն հնարավորություն ընձեռեց ամբողջ աշխարհի խմբերին ժամանակին և ճշգրիտ տեղեկանալ բանակցությունների մասին:

Բացի այդ, ՄԱԿ-ի Նյու Յորքի կենտրոնակայանում գտնվող կոնֆերանս սենյակը, որտեղ բանակցություններ էին ընթանում, WiFi-ով համալրվեց բանակցային գործընթացի կեսին: WiFi-ը թույլ էր տալիս սենյակում գտնվող անձանց էլեկտրոնային եղանակով մուտք գործել և կարդալ քննարկվող փաստաթղթերը՝ անհրաժեշտության դեպքում աջակցող սարքերի միջոցով: Հանձնաժողովի բոլոր նիստերն անցկացվել են սայլակով տեղաշարժվող մարդկանց համար մատչելի կոնֆերանս սենյակում, և լսողության խնդիրներ ունեցող անձանց պահանջով տրամադրվել են ձայնի ուժեղացուցիչներ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

Coalition for Inclusive Legal Reforms

"AGATE"
RIGHTS DEFENSE CENTER FOR WOMEN WITH DISABILITIES

ԴԵՊԻ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
TOWARDS INCLUSIVE ARMENIA